ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Արայիկ Հարությունյան -ին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Ավետիք Մեջլումյան -ից

ք. Երևան, Մարզարյան 1 նրբ., 4-րդ շ., բն. 37

հեռ.: 094889984

Էլ. հասցե: avetiq.mejlumyan@gmail.com

Հանրային քաղաքականության հնստիտուտ

պետական գրանցման համար: 211.171.805779

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում կազմակերպության ծավալած գործունեության վերաբերյալ
2. Մոտիվացիոն նամակ
3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դիմող՝ Ավետիք Մեջլումյան

<. 25 >_____ մայիսի _____ 2018թ.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
PUBLIC POLICY NON-GOVERNMENTAL ORGANIZATION
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ
NON-GOVERNMENTAL ORGANIZATION
02626488

Հասարակական քաղաքականության ինստիտուտ

Հակիրճ վերլուծություն

(Վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ)

Ստորև ներկայացված են ՀՔԻ կողմից վերջին տարիներին իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա ձևավորված եզրահանգումներն ու գնահատականները:

ՀՀ-ում դպրոցների օպտիմալացման գործընթացի մասնակցային մոնիտորինգ: Հետազոտության նպատակն էր՝ ՀՀ-ում դպրոցների օպտիմալացման գործընթացի մասնակցային մոնիտորինգ իրականացնելու միջոցով բացահայտել այդ գործընթացին բնորոշ հիմնախնդիրները և մշակել բարելավման առաջարկություններ: Հետազոտությունն իրականացվել է Երևանի և ՀՀ 3 մարզերի 6 դպրոցներում: Զեկույցի շնորհանդեսն ու քննարկումը նախատեսված է իրականացնել 2018թ. հունիսի վերջին տասնօրյակում՝ ոլորտի ներկայացուցիչների, կառավարության անդամների, ինչպես նաև՝ մամուլի ներկայացուցիչների մասնակցությամբ *(հետազոտությունն իրականացվել է Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի աջակցությամբ, 2017-2018թթ.):*

Հիմնական եզրահանգումներ

1. 2017թ. մայիսին Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Կառավարության հերթական նիստում քննարկվեց քաղաքային դպրոցների օպտիմալացման հարցը: Դպրոցների օպտիմալացման անհրաժեշտությունը հիմնավորվում էր թերբեռնվածության և կրթության որակի հետ կապված խնդիրներով: Կրթության ոլորտի պատասխանատուների՝ Կառավարության նիստին հետևած հրապարակային ելույթներում նշվում էր, որ առաջիկայում միավորվելու են քաղաքներում գործող մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցները, իսկ հետագայում՝ նաև մինչև 450 աշակերտ ունեցող քաղաքային դպրոցները:

2. 2017թ. օգոստոսի 24-ի Կառավարության նիստում որոշումներ ընդունվեցին մայրաքաղաքի և մարզերի մի շարք դպրոցների վերակազմակերպման և այլ դպրոցներին միացման մասին: Ի հակասություն մինչ այդ բարձրաձայնված սկզբունքների, վերակազմակերպված ուսումնական հաստատությունների շարքում կային գյուղական բնակավայրերում գործող դպրոցներ:

3. Դպրոցների վերակազմակերպման որոշումների մշակման գործընթացում աշակերտների, նրանց ծնողների և դպրոցի անձնակազմի կարծիքը չի քննարկվել կամ ուսումնասիրվել: Որևէ դպրոցում չի իրականացվել համակողմանի ուսումնասիրություն/գնահատում՝ պարզելու վերակազմակերպման նպատակահարմարությունը, սկզբունքները, պայմանները, հնարավոր հետևանքներն ու դրանց հաղթահարման ուղիները:

4. Թափանցիկ և հասանելի չեն վերակազմակերպվող դպրոցի ընտրության սկզբունքները, ինչպես նաև՝ համապատասխան որոշման մշակման գործընթացը և դրան հանրության մասնակցության եղանակները: Վերակազմակերպման ենթակա դպրոցները հնարավորություն չեն ունեցել շտկելու այն խնդիրները, որոնք հիմք են դարձել վերակազմակերպման գործընթացի համար:

5. Դպրոցների վերակազմակերպման որոշումների մեկ այլ խնդիր է դրանց հիմնավորվածությունը՝ սոցիալական արդարության տեսանկյունից: Ուսումնասիրված գրեթե բոլոր դեպքերում հարցվողներն այդ որոշումներն անարդար են համարում՝ մատնանշելով այլ ավելի քիչ սովորողներ ունեցող, սակայն չվերակազմակերպված դպրոցների օրինակները:

6. Կառավարության համապատասխան որոշումներում որպես դպրոցի վերակազմակերպման կրկնվող փաստարկ՝ նշված է սովորողների ցածր թվաքանակը: Գրեթե բոլոր վերակազմակերպված դպրոցներում, ըստ ուսուցիչների և ծնողների, վերջին տարիներին նկատվել է սովորողների թվի աճի դրական դինամիկա: Սովորողների թվի աճ է կանխատեսված եղել նաև 2018-2019թթ. ուսումնական տարվա համար՝ հատկապես առաջին դասարանցիների մուտքի շնորհիվ: Կառավարության որոշումներում որպես հիմնավորման ելակետ ընդունված սովորողների թվաքանակը համադրված չէ դրա դինամիկայի և կանխատեսումների հետ, ինչը բավարար չէ իրավիճակի լիարժեք պատկերն ունենալու համար:

7. Հարցվողների գերակշիռ մասը ծանոթ չէր Կառավարության համապատասխան որոշումների բովանդակությանը և բերված հիմնավորումներին: Դպրոցների վերակազմակերպումն ու միացումը մեկնաբանվում էր որպես «դպրոցի փակում»: Դիտորդների կողմից համապատասխան որոշումներից արված մեջբերումները (օրինակ՝ «Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար պայմանների ստեղծում», «Կրթական ուսումնական հաստատությունների՝ մանկավարժական ներուժով համալրում», «Դպրոցների գործունեության արդյունավետության բարձրացում», և այլն) հիմնավորված, արդարացված չէին թվում հարցվողների գերակշիռ մեծամասնությանը: Վերջիններս չէին կարողանում պատկերացնել, թե նշված խնդիրներն ու ակնկալվող արդյունքներն ինչպես են ապահովվելու:

8. Թե՛ Կառավարության որոշումների կայացման անհարմար ժամանակահատվածը, թե՛ դրանց պատշաճ իրազեկման բացակայությունը հնարավորություն չի տվել շահառուներին պլանավորելու երեխաների ուսման կազմակերպման հնարավոր տարբերակները (օրինակ՝ իրավահաջորդ դպրոցի փոխարեն՝ այլ դպրոցների ուսումնասիրություն և ընտրություն): Ճիշտ է, դպրոցների վերակազմակերպման գործընթացը երկամսյա ժամկետում է իրականացվել և ծնողները բավարար ժամանակ ունեին այլ դպրոցների ուսումնասիրության համար, սակայն, երեխաների տեղափոխությունը՝ այլ դպրոցներ, ուսումնական տարվա միջնամասում, չի կարելի արդյունավետ մոտեցում համարել:

9. Բացի այդ, վերակազմակերպվող որոշ դպրոցներում մանկավարժական կոլեկտիվը հորդորել է ծնողներին դեռևս չսկսել երեխաների տեղափոխության գործընթացը, սպասել վերակազմակերպման որոշման հնարավոր չեղարկմանը կամ հետաձգմանը: Դպրոցի ճակատագրի վերաբերյալ անորոշության զգացումը՝ ամրապնդված նաև ոչ պաշտոնական լուրերով, նույնպես խոչընդոտել է աշակերտների բնականոն տեղափոխությանը՝ իրենց նախընտրած դպրոցները: Անորոշության և սպասողական վիճակի պատճառով աշակերտներն «ավտոմատ կերպով» ճանաչվել են իրավահաջորդ դպրոցի սովորողներ, թեև, բավարար ժամանակ ունենալու և պատշաճ իրազեկված լինելու դեպքում, կարող էին այլ դպրոցներ ընտրել:

10. Ի տարբերություն մայրաքաղաքի դպրոցների շահառուների, մարզային (հատկապես՝ գյուղական բնակավայրերի) դպրոցների շահառուներն առաջարկվող՝ իրավահաջորդ դպրոցի փոխարեն մեկ այլ դպրոցի ընտրության պատշաճ տարբերակներ չունեն:

11. Ուսումնասիրված դեպքերից մեկում դպրոցների թվի կրճատումը հանգեցրել է դրանց միջև մրցակցության չեզոքացմանը, և որպես հետևանք, սովորողների հանդեպ ուսուցիչների վերաբերմունքի բացասական (կոպիտ, անհարգալից) փոփոխությանը: Եթե նախկինում ուսուցիչները կաշկանդված էին այն հանգամանքով, որ «դժգոհ» աշակերտները կարող են տեղափոխվել այլ կրթական հաստատություն, ապա այժմ այդ զսպող գործոնը չկա: Այս խնդիրը հատկապես ակտուալ է մարզային բնակավայրերում, որտեղ օպտիմալացումն առավել ցցուն է դարձնում այլընտրանքների բացակայությունը:

12. Հարցվողները դժվարացել են նշել դպրոցների վերակազմակերպման արդյունքում կրթության որակի բարելավման կոնկրետ դրսևորումներ: Գրեթե հավասարաչափ էին բաշխված հակադիր պատասխաններն այն մասին, որ դպրոցի փոփոխության արդյունքում կրթության որակը տուժել է կամ բարելավվել:

13. Կրթության որակի վրա բացասաբար ազդող գործոնների շարքում առաջին հերթին նշվել են երեխաների ադապտացիոն խնդիրները (պայմանավորված մանկավարժական և ընկերական միջավայրի փոփոխությամբ) և նոր դասարանում երեխաների բարձր թվաքանակը (ցածր խտությամբ դասարաններում ուսուցիչներն անհատական մոտեցում էին ցուցաբերում յուրաքանչյուրի աշակերտի):

14. Կրթության որակի հետ կապված մեկ այլ խնդիր վերաբերում է օտար լեզուների ուսուցմանը: Ուսումնասիրված առնվազն երկու դեպքում վերակազմակերպված և իրավահաջորդ դպրոցներում տարբեր օտար լեզուներ էին դասավանդվում: Տեղափոխված աշակերտները, որոնք վերակազմակերպված դպրոցում այլ լեզու էին սովորել, իրավահաջորդ դպրոցում պետք է նոր օտար լեզու յուրացնեն, ինչը հատկապես դժվար է բարձր դասարանների երեխաների համար: Այս հանգամանքը նաև օտար լեզվի կրկնուսուցման հավելյալ ծախսերի պատճառ է դարձել:

15. Վերակազմակերպումը միշտ չէ, որ հանգեցրել է սովորողների ուսումնառության շենքային և գույքային պայմանների բարելավման: Դպրոցների վերակազմակերպման երեք դեպքում (Երևանում, Փարաքարում, Ֆյունիկում), ըստ շահառուների ընկալման, իրավահաջորդ դպրոցի շենքային և գույքային պայմաններն ավելի վատն են, քան վերակազմակերպված դպրոցի համանման պայմանները:

16. Դպրոցների վերակազմակերպման բոլոր դեպքերում աճել է սովորողների տեղաշարժի համար անհրաժեշտ ժամանակը: Ուսումնասիրված բոլոր դեպքերում, անկախ տեղաշարժման եղանակից (ոտքով կամ տրանսպորտով) սովորողները միջինում 2 անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում դպրոց հասնելու և վերադառնալու համար:

17. Որոշ դեպքերում աշակերտները, նոր դպրոց գնալիս, ստիպված են փողոց/ներ հատել, ինչի անհրաժեշտությունը նախկինում չկար: Երևանի իրավահաջորդ դպրոցների մեկի մոտ, օրինակ, ըստ ծնողների, հետիոտնային անցում չկա, իսկ ամենամոտ անցումներն էլ կահավորված չեն լուսացույցերով:

18. Ուսուցիչները ևս, որոնց աշխատավայրը փոխվել է, ավելի շատ ժամանակ են ծախսում աշխատանքի գնալու և վերադառնալու վրա: Մարզային բնակավայրերում կան դեպքեր, երբ ուսուցչի նոր աշխատավայրն այլ համայնքում է՝ դրանից բխող դժվարություններով: Մի քանի դեպքում կրճատված ուսուցիչներն ընտանիքներով մշտական բնակության են տեղափոխվել այլ համայնք:

19. Որպես դպրոցի վերակազմակերպման բացասական հետևանք՝ հարցված ծնողներն ու ուսուցիչներն առավել հաճախ նշել են նոր դպրոցներում երեխաների սոցիալական և հոգեբանական ադապտացիայի դժվարությունների մասին: Որոշ դպրոցներում եղել են տեղափոխված աշակերտների նկատմամբ խտրականության ու պիտակավորման ակնհայտ դրսևորումներ (թե՛ ուսուցիչների, թե՛ այլ աշակերտների ծնողների կողմից):

20. Հարմարման և սոցիալական լարվածության խնդիրները, պակաս չափով, բնորոշ են եղել նաև ուսուցիչների՝ նոր կոլեկտիվներում ներառմանը: Կոնֆլիկտային իրավիճակների հիմնական պատճառը սահմանափակ ժամաքանակի վերաբաշխումն է՝ նոր ուսուցիչներով համալրված կոլեկտիվում:

21. Յուրաքանչյուր դպրոց ունի դասավանդման որոշակի մշակույթ՝ յուրահատուկ մոտեցումներով ու ավանդույթներով: Դպրոցների օպտիմալացման բացասական հետևանքներից է կայացած, փորձառու մանկավարժական կոլեկտիվների փլուզումն ու այդ մշակույթի վերացումը:

22. Ուսումնասիրված դեպքերի մեծ մասում վերակազմակերպված դպրոցների նախկին ուսուցիչներին հազվադեպ է աջակցություն ցուցաբերվել՝ աշխատանք գտնելու հարցում: Կան ուսուցիչներ, որ օպտիմալացման արդյունքում դարձել են գործազուրկ:

23. Այն դեպքերում, երբ ուսուցիչները շարունակել են մանկավարժական գործունեությունը (թե՛ իրավահաջորդ, թե՛ այլ դպրոցում), նրանց աշխատանքային զբաղվածությունը սովորաբար նվազել է՝ նախկին աշխատանքային զբաղվածության ծավալի (դրույքի) համեմատ: Բնականաբար, նվազել է նաև այդ ուսուցիչների աշխատավարձը:

24. Վերակազմակերպված դպրոցների ուսումնաօժանդակ անձնակազմի անդամների գործազրկության և աշխատանքի տեղավորման խնդիրները նույնպես գրեթե դուրս են մնացել որևէ պետական կամ համայնքային մարմնի ուշադրությունից:

25. Դպրոցների փոփոխության արդյունքում բազմաթիվ դեպքերում աճել են աշակերտների և ուսուցիչների հավելյալ ծախսերը՝ տրանսպորտի, սննդի, որոշ դեպքերում՝ նաև կրկնուսուցման համար:

26. Եթե նախկինում հնարավոր էր դպրոց հասնել ոտքով, ապա այժմ որոշ երեխաներ ստիպված են օգտվել հանրային տրանսպորտից, ինչը մեկ երեկայի համար ամսական միջինում 4500 դրամի հավելյալ ծախս է ենթադրում: Տրանսպորտային հավելյալ ծախսերի մյուս պատճառը տաքսուց օգտվելն է, որն իր հերթին հետևանք է համապատասխան երթուղիների պակասի (օրինակ՝ միայն մեկ երթուղի է կապում նախկին և ներկա դպրոցների մերձակա տարածքները), հանրային տրանսպորտի անկանխատեսելի չվացուցակի կամ կանգառների հեռու, անհարմար տեղակայման: Տաքսուց օգտվելու պատճառով առաջ եկած ծախսերն էականորեն ավելի բարձր են, քան հանրային տրանսպորտի դեպքում:

27. Բացահայտվել է առվազն մեկ դեպք, երբ անվասայլակով (և ընկերների օգնությամբ) դպրոց գնացող երեխան ներկայումս ստիպված է օգտվել տաքսու ծառայություններից, քանի որ իրավահաջորդ դպրոցը համեմատաբար հեռու է:

28. Գյուղական բնակավայրերում դպրոցների վերակազմակերպման առկա և կանխատեսվող բացասական հետևանքներն ավելի ցայտուն են:

29. Գյուղերում աշակերտների տեղաշարժը՝ դեպի այլ համայնքների դպրոցներ, ռիսկեր է պարունակում երեխաների կյանքի և առողջության համար: Այդ ռիսկերն առավել ակնհայտ են բարձր լեռնային շրջանների բնակլիմայական վատ պայմաններում (օրինակ՝ ձնաբքի պայմաններում փակված ճանապարհներին մնալու վտանգը):

29.1 Գյուղերում աշակերտների տրանսպորտային տեղաշարժի ապահովումը բարդ է՝ հանրային տրանսպորտի անհարմար և անկանխատեսելի չվացուցակի, անապահով ընտանիքների համար առաջացող լրացուցիչ ծախսերի, և այլ պատճառներով: Անգամ աշակերտների տեղափոխության համար հատկացված փոխադրամիջոցի առկայության պարագայում էլ մնում են մի շարք խնդիրներ: Օրինակ, դասերը մյուսներից շուտ ավարտող ցածր դասարանների երեխաները ստիպված են լինում սպասելու ավելի բարձր դասարանների աշակերտներին՝ նրանց հետ միասին գյուղ վերադառնալու համար: Կամ՝ բարձր դասարանների աշակերտներին ազատում են վերջին դասերից՝ նույն նպատակով (խմբով վերադառնալու համար):

29.2 Աշակերտների՝ այլ բնակավայրում դպրոց հաճախելու արդյունքում թուլանում է դպրոց-աշակերտ-ծնող կապը: Ծնողական համայնքը մասնակցության ավելի քիչ հնարավորություն է ստանում:

29.3 Նշված և այլ գործոնների ազդեցությամբ կանխատեսելի է կրթության անմատչելիության խորացումը՝ գյուղական բնակավայրերի երեխաների համար (ինչն արդեն, ըստ տարբեր հետազոտությունների, ակտուալ հիմնախնդիր է Հայաստանում), ինչպես նաև՝ նրանց կրթության որակի անկումը:

29.4 Գյուղում դպրոցի գործառությունն ունի համայնքաստեղծ և համայնքապահպան կարևոր նշանակություն: Դրա բացակայությունը համայնքի անդամների կողմից մեկնաբանվում է որպես բնակչության արտահոսքի լուրջ խթան: Հետազոտված մարզային համայնքներում դպրոցի օպտիմալացման հետևանքով մի քանի ընտանիքներ տեղափոխվել են այլ համայնքներ (այդ թվում՝ արտերկիր): Ակնկալվում է, որ հետագա տարիներին դպրոցի բացակայությունն էլ ավելի է խորացնելու այդ խնդիրը:

29.5 Գյուղում դպրոցը նաև կարևոր մշակութային գործառույթ ունի: Այն համայնքի բնակիչների համար մշակութային տարրերին առնչության եզակի հարթակներից ու հնարավորություններից է: Դպրոցի բացակայությունն էականորեն վնասում է գյուղական համայնքի մշակութային կյանքին:

30. Դպրոցների վերակազմակերպման դրական հետևանքներից են.

30.1 Իրավահաջորդ դպրոցում աշակերտների թվաքանակի ավելացումը, և որպես հետևանք, աշակերտների միջև մրցակցության խթանումը,

30.2 Աշակերտական սոցիալական միջավայրի «թարմացումն» ու համալրումը, նոր սոցիալական կապերի ու հարաբերությունների ձևավորումը, համայնքային կյանքին բնորոշ «փակ» մշակույթի «բացումը»,

30.3 Վերակազմակերպված որոշ դպրոցներում աշակերտների՝ դասերից բացակայության, ուշացումների, ցածր առաջադիմության նկատմամբ ձևավորված լոյալ մոտեցման հաղթահարումը և նոր դպրոցներում ավելի «խիստ», կարգապահությանն ու կրթական ներջնարդյունքների ապահովմանը միտված մոտեցումների կիրառությունը:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատում ՀՀ հանրակրթության բնագավառում

Հետազոտության նպատակն էր՝ բացահայտել հանրակրթությանն առնչվող երեք բնագավառներում (վճարովի պարապմունքներ, ներառական կրթություն և դասագրքերի հրատարակություն) առկա կոռուպցիոն խնդիրները, և առաջարկել դրանց չեզոքացմանն ուղղված հնարավոր լուծումներ *(հետազոտությունն իրականացվել է Թրանսփարենսի հնթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի աջակցությամբ, 2016թ.):*

Հետազոտության հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները ամփոփված են քաղաքականության 3 համառոտագրերում, որոնք հասանելի են հետևյալ հղումներով.

1. Վճարովի պարապմունքները հանրակրթական դպրոցներում. պատճառներ և հետևանքներ, https://goo.gl/NG1JLM
2. Ներառական կրթության ներդրման հնարավոր չարաշահումները, https://goo.gl/JYCzYH
3. Դասագրքաստեղծման գործընթացում պետք է վերացվեն շահերի բախման և հայեցողական որոշումների ընդունման հնարավորությունները, https://goo.gl/H7PFAU

Հանրային քաղաքականության ինստիտուտ

Մոտիվացիոն նամակ

(ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար)

Հանրային քաղաքականության ինստիտուտն (ՀՔԻ) իր գործունեության ընթացքում կարողացել է իր ուրույն տեղը գրավել կրթական ոլորտում հետազոտություններ իրականացնող և քաղաքականության փոփոխություններ մշակող կազմակերպությունների շարքում: ՀՔԻ-ն ավելի քան հինգ տարի իրականացնում է կրթական ոլորտի և պետական քաղաքականության հետազոտություններ՝ վեր հանելով առկա խնդիրներն ու ռիսկերը և առաջարկելով համապատասխան փոփոխությունների փաթեթներ՝ հետևողական ջատագովության և քարոզչության միջոցով:

ՀՔԻ-ն ունի կրթության փորձագետների և ոլորտի ներկայացուցիչների մեծաթիվ մասնագիտական ցանց, որը հնարավորություն է տալիս կրթական ոլորտին ուղղված քննարկումներին մասնակից դարձնելու ոլորտին առնչվող բոլոր շերտերին՝ ուսանողներ, ուսուցիչներ, դասախոսներ, փորձագետներ և որոշում կայացնողներ:

ՀՔԻ անդամներն իրենց գործունեության ընթացքում պաշարել են բավական հարուստ փորձ՝ հետազոտությունների, ուսումնասիրությունների և մոնիտորինգի իրականացման, տվյալների հավաքագրման, դրանց վերլուծության և առաջարկությունների մշակման գործում: Կազմակերպությունը համալրել է իր բազան տասնյակ հետազոտություններով՝ կրթական ոլորտում առկա կոռուպցիայի, իրավախախտումների, անհավասարության և այլ խնդիրների վերաբերյալ:

Երկրում ստեղծված նոր իրավիճակը պարարտ հող է ստեղծել կրթական ոլորտի բարեփոխումների և զարգացման համար: Այժմ ավելի քան իրատեսական է դառնում ՀՔԻ կողմից իր գործունեության ընթացքում դավանած արժեքների, ոլորտի վերաբերյալ ունեցած պատկերացումների ու տեսլականի իրագործումը: ՀՔԻ ներկայացուցիչները տարբեր հարթակներից բազմիցս խոսել են կրթական ոլորտի վերաբերյալ ունեցած իրենց տեսլականի մասին՝ ունենալով անհրաժեշտ կարճաժամկետ և երակարժամկետ բարեփոխումների հստակ քարտեզը: Կազմակերպության անդամներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ոլորտին առնչվող քննարկումներին, սեմինարներին, ֆորմալ և ոչ ֆորմալ հանդիպումներին՝ մասնակիցը լինելով կրթական ոլորտի զարգացումներին:

Կազմակերպության կողմից իրականացվող վերջին քննարկումներից մեկն էլ նվիրված էր հենց կրթական ոլորտում առկա խնդիրներին, ոլորտի ներակայացուցիչների մտահոգություններին և դրանց հնարավոր լուծումներին: 2018թ. մայիսի 5-ին տեղի ունեցած քննարկման մասնակիցների շարքերում էին ԿԳ ներկայիս նախարարը, ուսանողներ, ուսուցիչներ, դասախոսներ, ինչպես նաև՝ կրթական ոլորտի փորձագետներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Քննարկման

արդյունքում ՀՔԻ-ն ներկայացրեց առաջարկությունների և բորեփոխման ուղիների ամփոփ փաթեթը՝ հասանելի դարձնելով այն ինչպես հասարակության լայն շերտերի, այնպես էլ՝ որոշում կայացնողների համար:

ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու դեպքում ՀՔԻ-ն կարող է իր լավագույն փորձն ու տարիների կուտակած պրոֆեսիոնալիզմը ներդնել կրթական ոլորտում շոշափելի հաջողությունների հասնելու համար: Կազմակերպության գործընկերների և շահառուների մեծաթիվ բանակը հնարավորություն կընձեռի կրթական ոլորտի բարեփոխումներում ներգրավելու ոլորտի լավագույն մասնագետներին և շահագրգիռ անձանց:

Բացի այդ, կազմակերպությունը կարող է իր ներդրումն ունենալ՝ ինչպես նախկինում կատարած հետազոտությունները, այնպես էլ՝ նոր ծրագրերը և դրամաշնորհները լավագույնս օգտագործելու՝ նախարարության կողմից հաստատված գերակա ուղղություններում փորձագիտական աշխատանքներ կատարելու համար:

Հանրային քաղաքականության ինստիտուտի գործունեությունը 2016-2018թթ.

(ամփոփ տեղեկանք)

Հանրային քաղաքականության ինստիտուտ (ՀՔԻ) հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2014թ.: ՀՔԻ նպատակն է՝ նպաստել թափանցիկ, և հաշվետու հանրային քաղաքականության ձևավորմանը՝ խթանելով մարդկային զարգացումը, ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը և արդյունավետ կառավարումը:

Կազմակերպությունը մշակում և իրականացնում է հետազոտություններ և քաղաքականության ուսումնասիրություններ, կազմակերպում է սեմինարներ, դասընթացներ և հանրային բանավեճեր, խթանում և աջակցում է հանրային քաղաքականության մշակման գործընթացում հասարակության ներգրավմանն ու իրազեկմանը:

Վերջին երկու տարվա ընթացքում ՀՔԻ-ն իրականացրել է մի շարք հետազոտություններ՝ շեշտը դնելով կրթական ոլորտում առկա խնդիրների՝ մասնավորապես՝ կոռուպցիոն ռիսկերի, բարեվարքության և էթիկայի կանոնների խախտման վրա: Կազմակերպության նպատակն է՝ հետազոտությունների օգնությամբ բացահայտել ոլորտային կարևորագույն խնդիրները և հետևողական ջատագովության միջոցով նպաստել պետական քաղաքականության հաշվետվողականությանն ու բարեփոխումների իրականացմանը: ՀՔԻ վերջին երկու տարիներին իրականացված հետազոտություններն են.

1. **Կոռուպցիոն ռիսկերի գնահատում ՀՀ հանրակրթության բնագավառում:** Հետազոտության նպատակն էր՝ բացահայտել հանրակրթությանն առնչվող երեք բնագավառներում (վճարովի պարապմունքներ, ներառական կրթություն և դասագրքերի հրատարակություն) առկա կոռուպցիոն խնդիրները, և առաջարկել դրանց չեզոքացմանն ուղղված հնարավոր լուծումներ *(Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի աջակցությամբ, 2016թ.):*

2. **Էթիկայի կանոնների խախտումները կրթական հաստատություններում:** Քանակական և որակական մեթոդաբանությունների զուգակցությամբ իրականացված այս հետազոտության ընթացքում վեր են հանվել էթիկայի և վարքագծային հնարավոր խախտումները՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հետազոտությունը հիմնված է 7 պետական բուհերի 970 ուսանողների հարցման արդյունքների վրա: Էթիկայի խախտումների վերլուծության հիման վրա մշակվել են այն հիմնական մոտեցումներն ու առաջարկությունները, որոնք պետք է հաշվի առնեն բուհերը՝ էթիկայի ու վարքագծային իրենց կանոնակարգերը մշակելիս *(Եվրոպայի խորհրդի աջակցությամբ, 2017թ.):*

3. **Դպրոցների օպտիմալացման գործընթացի մասնակցային մոնիտորինգ:** Հետազոտության նպատակն էր՝ ՀՀ-ում դպրոցների օպտիմալացման գործընթացի մասնակցային մոնիտորինգ իրականացնելու միջոցով բացահայտել այդ գործընթացին բնորոշ հիմնախնդիրները և մշակել բարելավման առաջարկություններ:

Հետազոտությունն իրականացվել է Երևանի և 3 մարզերի 6 դպրոցներում: Զեկույցի շնորհանդեսն ու քննարկումը նախատեսված է իրականացնել 2018թ. հունիսի վերջին տասնօրյակում՝ ոլորտի ներկայացուցիչների, կառավարության անդամների, ինչպես նաև՝ մամուլի ներկայացուցիչների մասնակցությամբ *(Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի աջակցությամբ, 2017թ.):*

4. **Բարեվարքության գնահատումը նախադպրոցական, հանրակրթական և բարձրագույն կրթության ոլորտներում և կրթության հանգույցի ստեղծումը:** Ծրագրի առաջին բաղկացուցչի նպատակն է՝ վեր հանել կրթական համակարգի վերոնշյալ երեք ուղղություններում բարեվարքության խնդիրները: Ծրագրի երկրորդ հատվածը հիմնված է կրթության հանգույցի ստեղծման վրա: Հանրային քաղաքականության ինստիտուտն անց է կացնում թեմատիկ քննարկումներ երկու ուղղություններով՝ գրքի քննարկումներ և հետազոտության արդյունքների հրապարակումներ: Կրթության հանգույցի նպատակն է՝ արդյունավետ և կառուցողական քննարկումների միջոցով ստեղծել քաղաքացիական հասարակության ակտիվ անդամների բանակ: Կրթության հանգույցի շրջանակներում իրականացված վերջին քննարկումներից մեկը վերաբերում էր կրթական ոլորտում առկա խնդիրներին և դրանց հնարավոր կարճաժամկետ լուծումներին *(Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի աջակցությամբ, 2017-2018թթ.):*

5. **Դրական փոփոխություն՝ քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով:** Ծրագիրն ուղղված է քաղաքացիական հասարակության կարողությունների ուժեղացմանը՝ մարդու իրավունքների, քրեական արդարադատության և սոցիալական արդարության ոլորտներում համակարգային մշտադիտարկում և ջատագովություն իրականացնելու համար: Ծրագրի շրջանակներում ՀՔԻ-ն հանձն է առել «Գիտելիքի հանգույցի» ստեղծումը, որը շարունակական աջակցություն և խորհրդատվություն կտրամադրի հասարակական կազմակերպություններին՝ մշտադիտարկման և ջատագովության գործընթացների իրականացման ընթացքում՝ դասընթացների և անհատական խորհրդատվության տրամադրման միջոցով *(Եվրոպական Միության աջակցությամբ, 2018-2020թթ.):*